ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Հունիսի 30-ին Ստեփանակերտում էր գտնվում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Գ. Ա. Գալոյանը: Կուսակցության քաղաքային կոմիտեում նա հանդիպում ունեցավ ԼՂԻՄ-ի կառավարման հատուկ կոմիտեի անդամների, մարզային կենտրոնի հասարակայնության ներկայացուցիչների հետ:

Հակիրճ ելույթում ընկ. Գ. Ա. Գալոյանը ներկաներին պատմեց Լեռնային Ղարաբաղի պրոբլեմների նկատմամբ Հայկական ԽՍՀ ղեկավարության դիրքորոշման մասին, իր նկատառումները հայտնեց ԼՂԻՄ-ի հարցի զարգացման դինամիկայի վերաբերյալ՝ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարի որոշման լույսով: Հեռտորը մասնավորապես ընդգծեց, որ ամբողջ հայ ժողովրդի իղձերն արտացոլող Ղարաբաղյան պրոբլեմը կարող է իր արդարացի լուծումը գտնել մեր պետության դեմոկրատական հիմունքների, նրա հիմնական օրենքի հետագա կատարելագործման շնորհիվ միայն: Հույս հայտնվեց, որ ազգությունների խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովին, որը շուտով գալու է ինքնավար մարզ, կհաջողվի խորամուխ լինել ԼՂԻՄ-ում տիրող իրադրությանը և անաչառ ինֆորմացիա տալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին:

Խոսելով Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի այսօրվա կապերի մասին, ընկ. Գ. Գալոյանը հայտարարեց, որ դրանք՝ լինի էկոնոմիկայի, մշակույթի, ժողովրդական կրթության, թե հասարակական կյանքի մյուս ոլորտներում, օրեցօր պետք է նոր բովանդակությամբ հարստանան: Առաջադրված նպատակի նվաճման հատակ կողմնորոշիչները սահմանվել են հանրապետության Գերագույն խորհրդի վերջին նստաշրջանում: Հիմա գլխավորն է խոսքից ու հավաստիացումներից անցնել կոնկրետ գործերի:

Ընկ. Գ. Գալոյանը պատասխանեց ներկաների բազմաթիվ հարցերին: Նրանք մասնավորապես մտահոգություն էին հայտնում այն փաստի առթիվ, որ դեռևս ստեղծվում են արհեստական արգելքներ, որոնք խոչընդոտում են հայրենակիցների միջև արգասավոր կապերի հաստատմանը: Ներկա գտնվողներից շատերի կարծիքով դա մի կողմից հետևանք է ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի աշխատանքում տեղ գտած վրիպումների, մյուս կողմից՝ նրման բացասական երևույթների վերացման գործում Հայկական ԽՍՀ ղեկավարության անվճռականության:

Վերջում ընկ. Գ. Ա. Գալոյանը հանդիպման մասնակիցներին հավաստիացրեց, որ Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն, հանրապետության կառավարությունը չունեն և չեն կարող ունենալ այլ շահ, բացի հայ ժողովրդի շահերից: Այլ ուղի չկա:

Հանդիպմանը մասնակցում էր ՀԿԿ Կենտկոմի մամուլի սեկտորի վարիչ Գ. Ա. Մարտիրոսյանը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ